ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

2016

# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
# ԵՎ
# ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

***Սիրելի՛ աշակերտ***

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:
*Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:*

***Յանկանում ենք հաջողություն:***

**1** **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *օ*.**

1) ան-րեն, տն-րինություն, օրըստ-րե, օր-րել
2) նախ-րոք, աշխարհազ-ր, ազգ-գուտ, գիշեր-թիկ
3) հն-րյա, փայտ-ջիլ, միջ-րեական, օրեց-ր
4) ապ-րինի, նախ-րե, վաղ-րոք, հանր-գուտ

**2** **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում անջատ.**

1) հանել (բերել), ոտք (ոտքի), կրակ (ու) բոց, ծափ (ողջույն)
2) դեմ (հանդիման), տարուց (տարի), ի (դեպ), Սանկտ (Պետերբուրգ)
3) գնալ (հասնել), րոպե (առ) րոպե, առոք (փառոք), ալ (կարմիր)
4) աջ (ու) ահյակ, կուժ (կոտրուկ), սարն (ի) վեր, ձեռք (ձեռքի)

**3** **Ո՞ր շարքի բառերի (բառակապակցությունների) բոլոր բաղադրիչներն են գրվում *մեծատառով*.**

1) ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ, ՎԱՉԱԳԱՆ ԲԱՐԵՊԱՇՏ, ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ԱՐՔԱ, ՏՐԴԱՏ ՄԵԾ
2) ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ, ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ, ՄԱՐ ԱԲԱՍ ԿԱՏԻՆԱ, ԵՐՎԱՆԴ ՍԱԿԱՎԱԿՅԱՑ
3) ԴԵՂՁՈՒՆ-ԾԱՄ, ԿԱՐՈԼԻՆԳՆԵՐԻ ԱՐՔԱՅԱՏՈՀՄ, ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻ, ԼՅՈՒԴՎԻԳ ՎԱՆ ԲԵԹՀՈՎԵՆ
4) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ, ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏ, ՄԱՐԻԱՆՅԱՆ ԻՋՎԱԾՔ

**4** **Ո՞ր շարքի բոլոր բառերում է ընդգծված *ո*-ն արտասանվում *վո*.**

1) արագ**ո**տն, ամենա**ո**րակյալ, ան**ո**րսալի
2) զանգ**ո**սկր, բարձր**ո**րակ, երկարա**ո**տ
3) ամենա**ո**ղորկ, հնա**ո**ճ, արջա**ո**րս
4) ան**ո**ղնաշար, ան**ո**ղոք, հոգե**ո**րդի

**5** **Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն *չկա:***

1) **երե**-որսի կենդանի, **ոստրե**-թանկարժեք քար
2) **դրանիկ** - արքունի պաշտոնյա, **աշխետ** - դեղնակարմիր ձի
3) **մորի**-մորենու պտուղը, **դիպակ**-որևէ ստեղծագործության հատված
4) **ակնապիշ**- աչքի փոսիկ, **գույժ**-վատ լուր

**6** **Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:**

1) ցորնամորթ, հնադար, շողակն, հոգեորդի
2) հոգատար, հարածուն, զարեջուր, անբարետես
3) հոգեորդի, ոսկեվառ, դրամաշնորհ, կարեվեր
4) նկարազարդ, գեղաշուք, լեռնաշխարհ, չարախոս

**7** **Ո՞ր դարձվածքի բացատրությունն է սխալ:**

1) ***ձայն բարբառո հանապատի*** - պատասխան չստացած խոսք
2) ***մի սանրի կտավ*** - միևնույն գործին նվիրված
3) ***հին դարմանը քամուն տալ***- անցած անախորժ դեպքերը հիշեցնել
4) ***արդար յուղի տեղ ընդունել***- առանց կասկածելու հավատալ

**8** **Տրված բառերից քանիսո՞ւմ -*ու* վերջածանց կա.**
*սարսափազդու, կծու, հարսնացու, հատու, հասու, աչառու, ձեռնտու, ծովակատու, սերմացու, վրիժառու:*

1) յոթում
2) վեցում
3) բոլորում
4) ինում

**9** **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածականներ:**

1) լեզվանի, հովանի, պիտանի
2) ապառիկ, տակառիկ, անառիկ
3) աշխարհիկ, բացառիկ, պատառիկ
4) հպանցիկ, միջանցիկ, տարանցիկ

**10** **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառերն են ենթարկվում *ոջ* հոլովման:**

1) հարսնաքույր, տեր, սկեսրայր, կին
2) հողատեր, սկեսուր, խրիցկին, գործատեր
3) տիկին, ընկեր, բուժքույր, քեռակին
4) աներ, հանքատեր, տալ, հորաքույր

**11** **Ո՞ր նախադասության մեջ անձնական դերանուն կա:**

1) Ջուրը կյանքի ակունքն է. նա է ամեն ինչին կենդանություն պարգևողը:
2) Նա, եթե ուրիշի խոսքը չլսեր, հիմա անմխիթար վիճակում չէր լինի:
3) Ճիշտ կլինեին այս պատասխանները, եթե խնդիրներն ուշադիր լուծվեին:
4) Հենց ճայթեց կայծակը, կաղնին բռնկվեց, ու շուտով ոչ մի կանաչ ճյուղ ծառից չմնաց:

**12** **Ո՞ր շարքի բոլոր բայերն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի):**

1) կառչել, ասել, թռչել, զրուցել
2) կանչել, ննջել, հոտոտել, արտագրել
3) կոտրատել, տանել, վերափոխել, տալ
4) ուտել, հագնել, սովորել, խմել

**13** **Ո՞ր նախադասության մեջ առաջական հոդի գործածություն կա:**

1) Օրերս Երևան է ժամանելու նշանավոր երաժիշտը:
2) Աշխարհիս աղմուկը իրերի հավիտենական ծփանքն է:
3) Միամիտ դարձար բանսարկուների ձեռքին խաղալիք:
4) Անցավ կյանքս մի գիշերվա երազի պես:

**14** **Ո՞ր նախադասությունն է բարդ համադասական (նախադասությունները կետադրված չեն):**

1) Ծաղիկը ծառը թե չլինեն մարդ կխելագարվի:
2) Շները կորցրին գայլին ապա կորցրին նաև նրա հետքը:
3) Պատահում էր օրերով չէր երևում:
4) Ինչ որ ես չեմ ասել նա կասի վաղը:

**15** **Տրված նախադասություններից որո՞ւմ պարզ ստորոգյալ կա:**

1) Ես եմ համարձակը, և ամեն ինչի նախաձեռնողն եմ:
2) Մի՞թե մեր երկիրն էլ մի այդպիսի թռչնաբույն չէ:
3) Մի քանի օրով Հայաստան է եկել՝ համերգներ տալու:
4) Միրո հակառակն ամենևին էլ չսիրելը չէ:

**16** **Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը ներգործող անուղղակի խնդիր:**

1) **Այգու կողմից** մեղմ քամի էր փչում:
2) Նրա խոսքերը չեն ընդունվում **ժողովրդի կողմից**:
3) Երեխայի ճիշտ **դաստիարակությունից** շատ բան է կախված:
4) Ավետը **ուրախությունից** թռչկոտում է տեղում:

**17** **Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**
*Ես հավատացի, թերևս համոզեցի նրան, որ հույսը իրական բան է, և հուսացողը կհաղթի:*




**18** **Ո՞ր տարբերակում է ստորադաս նախադասությունը ենթակա:**

1) Խմբին մոտեցավ մի աղջիկ, որ հագել էր երկար շրջազգեստ:
2) Ոչ մի կերպ չէի պատկերացնում, թե ինչ էր սպասվում ընտանիքիս:
3) Պարզ չէ, թե ինչ ճանապարհով է երեխան հասել այստեղ:
4) Չեմ զղջում, որ ընկերոջս արտահայտվելու հնարավորություն չտվեցի:

**19** **Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Գույնզգույն լապտերները, որոնք կախված էին մոտակա ծառերը միմյանց հետ կապող ժապավեններից, մոգական խորհրդավորություն էին տալիս փողոցին:*

1) Մոտակա ծառերը միմյանց հետ կապող ժապավեններից կախվող գույնզգույն լապտերները մոգական խորհրդավորություն էին տալիս փողոցին:
2) Մոտակա ծառերը միմյանց հետ կապող ժապավեններից կախված գույնզգույն լապտերները մոգական խորհրդավորություն էին տալիս փողոցին:
3) Գույնզգույն լապտերները, կախվելով մոտակա ծառերը միմյանց հետ կապող ժապավեններից, մոգական խորհրդավորություն էին տալիս փողոցին:
4) Մոտակա ծառերը միմյանց հետ կապելով՝ ժապավեններից կախված գույնզգույն լապտերները մոգական խորհրդավորություն էին տալիս փողոցին:

**20** **Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը *չպիտի* տրոհվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Դու ինձ մեղադրում ես **ինչ խոսք** դու ունես նման իրավունք:
2) Չեզնից շատերը **իհարկե** հստակ չեն պատկերացնում իրավիճակի լրջությունը:
3) Քո սպառնալիքները **լոկ** ներքին վախդ ծածկելու միջոց են:
4) Աշխարհն էլ **այո** գժվել է կարծես:

**21** **Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. «Փշրվող թղթադրամների» (դրանք այժմ պաշտոնապես այդպես են անվանվում) թիվը շարունակում է մեծանալ, և ամենից շատ՝ 50 եվրոյինը: Չի բացառվում, որ փողերը շփված լինեն աղի սուլֆատի փոշու հետ: Դրա հպումը ջրի հետ, օրինակ, ձեռքերի քրտինքի հետ, կարող է հարուցել հիմնային ռեակցիա, որի հետևանքով կգոյանա ծծմբական թթու:
2. Գերմանիայում հաճախացել են «ինքնաքայքայվող» եվրոների դեպքերը: Շատ քաղաքներում ավելի ու ավելի հաճախ են հայտնաբերվում թղթադրամներ, որոնք ձեռքի շփումից փշրվում են չորացած տերևի նման:
3. Այս ենթադրության օգտին է խոսում այն փաստը, որ թղթադրամները քայքայվում են ոչ թե շրջանառության մեջ մտնելուց անմիջապես հետո, այլ որոշ ժամանակ անց: Եվ կարևորն այն է, որ գործարանային խոտանի վարկածը մասնագետները կտրականապես բացառում են:
4. Առաջ քաշված տեսակետներից մեկի համաձայն՝ փողի առեղծվածային ձևափոխումները տեղի են ունենում ծծմբական թթվի հետ շփման հետևանքով:

1) 1, 2, 3, 4
2) 4, 3, 1, 2
3) 2, 4, 1, 3
4) 3, 2, 4, 1

**22** **Հեղինակներից ո՞րը որ բնագավառն է ներկայացնում:**

ա. Մովսես Խորենացի — 1. բանաստեղծություն
բ. Ֆրիկ — 2. պատմագրություն
գ. Վարդան Այգեկցի — 3. վարքագրություն
դ. Կորյուն — 4. առակագրություն

1) ա-2, բ-3, գ-1, դ-4
2) ա-2, բ-1, գ-4, դ-3
3) ա-3, բ-2, գ-4, դ-1
4) ա-1, բ-2, գ-4, դ-3

**23** **Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

1. Թուխ ամպն այլ բամպակ արէ՛ք, ի ծաւէն դերձան քաշեցէ՛ք
2. Արեւն իւր երեսք արէ՛ք, զլուսընկան աստառ ձեւեցէ՛ք
3. Քանի՜ ու քանի՜ ասեմ. «Զիմ եարին կապան կարեցէ՛ք
4. Աստղերն այլ կոճակ արէ՛ք, զիս ի ներս օղկիկ շարեցէ՛ք»

1) 1, 3, 4, 2
2) 3, 2, 4, 1
3) 3, 1, 2, 4
4) 3, 2, 1, 4

**24** **Ո՞ր պնդումն է սխալ Միքայել Նալբանդյանի ստեղծագործության վերաբերյալ:**

1) «Մանկության օրեր» բանաստեղծության հերոսը կարծում է, որ կտրիճի ձեռքին ոչ թե քնար, այլ սուր է հարկավոր:
2) «Ազատություն» բանաստեղծությունը առաջին անգամ տպագրվել է գրողի «Հիշատակարան»-ի էջերում:
3) «Ազատություն» բանաստեղծության մեջ ճակատագիրը պոետին գուշակում է կյանքի լուսավոր ուղի:
4) «Կրիտիկա»-ն նվիրված է Պերճ Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպին:

**25** **Պետրոս Դուրյանի ո՞ր բանաստեղծությունն է ավարտվում «Աստուծո ծաղրն է Աշխարհ ալ արդեն...» տողով:**

1) «Սիրել»
2) «Տրտունջք»
3) «Իմ ցավը»
4) «Լճակ»

**26** **Ո՞ր գլխով է ավարտվում Րաֆֆու «Սամվել» պատմավեպը:**

1) «Արաքսի որոգայթները»
2) «Ողական ամրոցը»
3) «Մայրը»
4) «Խայթ»

**27** **Ո՞վ է տրված բանաստեղծական հատվածի հեղինակը.**

Աշխարհքում հաստատ չկա ոչ մի բան,
Ու մի՛ հավատալ երբեք ոչ մեկին.
Ոչ բախտի, փառքի, ոչ մեծ հաղթության,
Ոչ սիրած կնկա տված բաժակին...

1) Հովհաննես Թումանյանը
2) Ավետիք Իսահակյանը
3) Եղիշե Չարենցը
4) Հովհաննես Շիրազը

**28** **Ո՞ր շարքում են միայն Նար-Դոսի ստեղծագործությունները:**

1) «Սպանված աղավնին», «Խորհրդավոր միաձնուհին», «Նեղ օրերից մեկը», «Մեր թաղը»
2) «Սպանված աղավնին», «Ոսկի աքաղաղ», «Նեղ օրերից մեկը», «Մեր թաղը»
3) «Ես և նա», «Նեղ օրերից մեկը», «Առաքյալը», «Նամուս»
4) «Սպանված աղավնին», «Ես և նա», «Նեղ օրերից մեկը», «Մեր թաղը»

**29** **Ո՞ր բառն է բաց թողած:**

*..................սերունդների*
*Աչքն է դիպել լույս գագաթին,*
*Ու անցել:*

1) Եղեռնապուրծ
2) Խուճապահար
3) Մահախուճապ
4) Աստանդական

**30** **Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

ա. Իմ բացված սրտում հնչում է մի երգ
բ. Կարծես կանչում է ինձ մի քնքուշ ձեռք
գ. Անտես զանգերի կարկաչն եմ լսում
դ. - Կարծես թե մեկը ինձ է երազում

1) ա, գ, դ, բ
2) բ, գ, դ, ա
3) դ, բ, գ, ա
4) գ, ա, դ, բ

**31** **Տրվածներից ո՞րն է Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի սկիզբը:**

1) «Գիշերը խոժոռվել էր Տարոնի դաշտավայրի վրա: Ամեն ինչ ընկղմվել էր խավարի մեջ: Միայն հեռուն ալիքավորված լեռներից դեպի վերև բացվում էր հանդիսավոր երկինքը՝ տենդային աստղերով առլեցուն»:
2) «Լուսնի եղջյուրը ծածկվեցավ Քարքե լեռան ետևում, և Տարոնը ընկղմվեցավ գիշերային խավարի մեջ: Ոչ մի աստղ այդ գիշեր չէր երևում: Երկինքը պատած էր մոխրագույն ամպերով, որոնք մեղմ հոսանքով լողում էին դեպի Կրկուռ և Նեմրութ լեռների կողմերը...»:
3) «Լուսինը շտապով սահում էր դեպի Սիփանի բարձր գագաթները, որ ընկղմված էին խորին թախծալի մթության մեջ»:
4) «Ուրախ, աղմկալի Հաղամակերտը ներկայացնում էր մի մեռյալ քաղաք. փողոցներում ոչ ոք չէր երևում»:

32 **Ակսել Բակունցի «Խոնարհ աղջիկը» պատմվածքի հերոսն ինչպե՞ս է արձագանքում Խոնարհի հոր՝ ճաշին իրենց տուն գնալու հրավերին:**

1) Սիրով այցելում է նրանց տուն, քանի որ շատ էր ուզում մոտիկից շփվել Խոնարհի հետ:
2) Մերժում է հրավերը՝ պատճառ բռնելով գրքի ընթերցանությունը:
3) Մերժում է հրավերը՝ պատճառաբանելով, որ այդ օրը պետք է քաղաք մեկնի:
4) Չի ցանկանում գնալ նրանց տուն, բայցստիպված գնում է:

33 **Տրված բառերից քանիսո՞ւմ է գրվում *ղ*.**
ապու-տ, թ-կի, կք-ա, հա-ճապակի, ու-տագնաց, խա-տել, նա-շ, կ-տար, Վա-թանգ, վա-ճան, փա-չել, վ-տալ:

34 **Տրվածներից քանի՞սն են թվական.**
տասնյակ, հարյուրական, մեկ չորրորդ, քառորդ, հինգհարյուրամյա, միլիոնավոր, իննուկես, հազարավոր, հնգակի, քառապատիկ, երիցս, երկակի:

35 **Տրված հատվածում քանի՞ բաղադրիչ համառոտ նախադասություն կա:**

Մտա խանութ: Որքա՜ն դաժան երևացին ինձ այդ մարդիկ, որոնք, իրոք, դաժան էին: Մի պահ կամեցա դուրս գալ, բայց արդեն ուշ էր. առջևս մալականի սպառնալի կերպարանքն էր: Նա փակում էր փախուստի ճանապարհը: Ով չի կրել այդ վայրկյանները, չի կարող երևակայել նրանց դառնությունները: Սիրտս բաբախում էր. կարծես մտել էի հիվանդանոց: Երբ բերանս բաց արի, ձայնս դողաց, և նրա հնչյունն ինձ օտարոտի թվաց:

36 **Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Միակ ուղևորը, որը լռելյայն նստած լաստանավի աջ եզրին, մի ձեռքով խաղում էր կապույտ կոհակների հետ, նկարիչ Փանոս Թերլեմեզյանն էր:
- Տասներեքերորդ դարում՝ օրըստօրե փթթող Անի քաղաքում, ապրում էր մի իշխան՝ Անանիա անունով:
- Փոքրիկներից ութ-ինը քայլ հեռու՝ հինավուրց տան շեմին, նստած էր մի երիտասարդ կին՝ գույնզգույն զգեստով. նա այդ երեխաների մայրն էր:
- Բոլորն արդեն գիտեին՝ պատվավոր հյուրը ժամանում է, և պատրաստվում էին ըստ պատշաճի դիմավորելու նրան:

37 **Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**

համզավորում, փոխաբերություն, համեմատություն, շրջադասություն, մակդիր:

Փշով են պատված ուղիներըս մութ,
Մեր տեսիլները սառն ու ահավոր,
Մեզ գգվում են միշտ զգվանքով մի սուտ,
Մեզ խաչ են, խաչ են հանում ամեն օր…

38 **Բառազույգերից քանի՞սն են կազմված հականիշներից.**

բանադրանք-օրհնություն, լախտ-մտրակ, լայնախոհ-նեղմիտ, ճաղատ-թավամազ, թոշնել-փթթել, անըստգյուտ-կատարյալ, ունևոր-մեծատուն, զռեհիկ-բարեկիրթ:

39 **Նշել այն բառերի համարները, որոնցում ձայնավորի սղում կա.**

1. նախնական, 2. ընտանեկան, 3. կենդանական, 4. ծաղրանմանակում, 5. խեցեգործություն, 6. ներդրում, 7. առօրեական, 8. գիտնական, 9. բռնազբոսիկ:

**40** **Նշել այն բառերի համարները, որոնց ընդգծված մասն առանձին արմատ է.**

1. ան**աս**նակեր, 2. արտ**աս**ուք, 3. **աս**պետ, 4. **աս**պար, 5. **աս**պազեն:

**41** **Նշել այն տարբերակների համարները, որոնցում միայն անկախ դերբայներ են:**

1. աղացել, հեռանալ, տեսնել, իջնել
2. վխտալ, փախչել, ընթերցել, հագել
3. ուրախացնել, մոտենալիս, ծիծաղել, նստած
4. ծխալիս, հանգչող, կպած, մեծանալ
5. վախեցել, թվալ, տեսել, բուրել

**42** **Նշել մակբայների համարները.**

1. հազիվ, 2. բացի, 3. դանդաղորեն, 4. մոտակա, 5. ճեռաց, 6. զոնե, 7. երբևիցե, 8. հոտնկայս, 9. վերջին:

**43** **Ընդգծվածներից նշել ենթակաների համարները:**

Մյուս անկյունում դեղնազույն պղնձե շրջանակի մեջ Մարիամ Աստվածածնի 1. **պատկերն** էր դրված: Նրա առջև վառվում էր ճիթայուղի ապակյա կարմիր 2. **կանթեղը**: Ինքը՝ 3. **աղջիկը**, որ սկզբում թվաց գեղեցիկ, մոտիկից այլ 4. **տպավորություն** գործեց ինձ վրա: Նա շատ երիտասարդ էր, բայց աչքերի տակի 5. **կապտատակները** նրան տալիս էին մի տեսակ մաշված ու քրքրված պաճույճի 6. **տեսք**: Այդ կինը 7. **Էմիլյան** էր: Այդ վայրկյանին իմ մեջ ծագեց մի բուռն 8. **կարեկցություն**:

**44** **Նշել այն շարքերի համարները, որոնցում միայն Միսաք Մեծարենցի ստեղծագործություններն են:**

1. «Արևին», «Նավակները», «Հիվանդ է»
2. «Վայրկյան», «Իրիկունը», «Մեղուները»
3. «Հայորդիներ», «Միրերգ», «Ձմրան պարզ գիշեր»
4. «Տո՛ւր ինծի, Տե՛ր...», «Հյուղը», «Հովը»

**45** **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Մակբայները դառնում են ոչ միայն բայով, այլև ածականով արտահայտված անդամի լրացում:
2. Երկու գոյականական արմատով կազմված բառը կարող է լինել ածական:
3. ***Առջիվ*** բառը միայն կապ է:
4. Որոշ կապեր առաջացել են գոյականներից, ածականներից, դերբայներից՝ նրանց իմաստի մթագնման հետևանքով:
5. Հարաբերական դերանունները հարցականներից տարբերվում են նրանով, որ դառնում են նախադասության անդամ:
6. ***Երբևէ, երբևիցե*** բառերը մակբայներ չեն:

2016 թ. Պետական ավարտական քննություն

## *Պատասխանների ձևաթուղթ*

## *Հայոց լեզու և հայ գրականություն*

*Հիշեցում.* ընտրված տարբերակի համարին համապատասխանող վանդակում դնել X նշանը (միևնույն սյունակում մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):

### Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Պատասխանի համարը

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 1 |
| 2 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 2 |
| 3 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 3 |
| 4 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 4 |

Պատասխանի համարը

| | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 1 |
| 2 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 2 |
| 3 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 3 |
| 4 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 4 |

### Կարճ պատասխանով առաջադրանքներ

Կարճ պատասխան

33 ☐☐ 36 ☐☐

34 ☐☐ 37 ☐☐

35 ☐☐ 38 ☐☐

*Հիշեցում.* պատասխանի թվերից յուրաքանչյուրը գրել մեկական վանդակում:

### Կարճ պատասխանով առաջադրանքներ

Կարճ պատասխան

39 ☐☐☐☐☐☐ 42 ☐☐☐☐☐☐

40 ☐☐☐☐☐☐ 43 ☐☐☐☐☐☐

41 ☐☐☐☐☐☐ 44 ☐☐☐☐☐☐

### Պնդումների փունջ

Պնդումների փունջ

| 45 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| Ճիշտ է | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| Սխալ է | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| Չգիտեմ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |

### Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը

Ընտրովի պատասխաններ

☐☐ ☐☐

1 ☐ ☐

2 ☐ ☐

3 ☐ ☐

4 ☐ ☐

Կարճ պատասխաններ

☐☐ ☐☐☐☐☐☐

Պնդումների փունջ

45. ☐

Ճիշտ է ☐

Սխալ է ☐

Չգիտեմ ☐

☐

Փոխված պատասխանների քանակը

*Ստորագրե՛ք այս նախադասությունը՝*

*Ծանոթ եմ քննության կարգին:*

.............................................................................................

Հանձնաժողովի անդամներ՝

1. ..........................................................

2. ..........................................................

Հանձնաժողովի նախագահ՝

..........................................................

| | |
|---|---|
| Միավորների գումարը | |
| Գնահատականը | |